բոլորովին մերկ ոտները: Բայց մենք ցաւ չէինք զգում: Մենք շատ ուրախ էինք եւ խիստ եռանդով կը պանք գործին: Մարիամը եւ Մագթաղը իրանց մանրիկ ձեռներով հաւաքում էին ընկած հասկերը եւ ինձ վրայ ծիծաղում էին, որովհետեւ ես ծոյլ էի: Նրանք փունջեր էին կապում հասկերից, եւ երկու քոյրեր մրցութիւն էին անում, թէ որը շատ կհաւաքէ: Խե՜ղճ երեխաներ, կարծես զգում էին, թէ ձմեռը քաղցած կը մնան, եթէ այժմ պաշար չպատրաստեն: Մայրս նայում էր նրանց վրայ եւ լաց էր լինում...

Երեկոյեան ժամուն մեզանից ամէն մէկը իր հաւաքածը կապեց շալակին, դարձանք տուն: Մարիամը եւ Մագթաղը իրանց բեռներով մի առանձին հպարտութեամբ հանդիպեցին քեռուս երեխաներին, որպէս անխոնջ մշակներ, որ դառնում էին դաշտից:

Այսպէս ամէն օր, վաղ-առաւօտեան գնում էինք դաշտ հասկաքաղ անելու եւ երեկոյեան վերադառնում էինք: Մեր խրճթի դռան առջեւ կազմուեցաւ մի փոքրիկ դէզ հաւաքած հասկերից: Այնուհետեւ սկսեցինք մեր կալը կալսել: Բայց նա այնքան մեծ չէր, որ հարկաւոր լինէր կալսել ջարջառով: Մայրս սկսեց իր ձեռքով մանրել հասկերը մի հաստ փայտով, որը այնքան ծանր էր, որ ես դժուարութեամբ կարողանում էի բարձրացնել: Երբ յարդը քամուն տուեցինք, մաքուր ցորենը հաւաքեցինք թաղարների մէջ: Ձմեռոյայ մեր հացի պաշարը արդէն պատրաստ էր:

Դեռ մնում էր ամենահարկաւորը — վառելիքը: Մեր խարխուլ բնակարանի համար պէտք էր բաւական տաքութիւն, մանաւանդ որ ձմեռը այս կողմերում խիստ սաստիկ է լինում: Մայրս այնքան զբաղուած էր, որ ամենեւին ժամանակ չունէր հոգ տանելու վառելիքի մասին. այդ պատճառով, այդ հոգսը մնաց իմ եւ քոյրերիս վրայ: Մայրս իր ձեռքով հիւսեց երեք փոքրիկ կը թոցնէր, մէկը ինձ համար, երկուսը Մարիամի եւ Մագթաղի համար: Տեսնելու էր, թէ որպիսի՜ ուրախութեամբ մենք այդ կթոցները առնում էինք մեր ուսերի վրայ եւ ամէն օր գնում էինք դաշտը. այնտեղ հաւաքում էինք քակորներ, ծառերից թափուած տերեւներ, փուշ եւ մացառներ, եւ բերում էինք ձմեռը մեր խրճիթը տաքացնելու համար: Ա՜խ, որքա՜ն լաւ բան է եղել աշխատութիւնը: Ես այնուհետեւ միշտ յարգանքով էի նայում այն քակորների կոյտի վրայ, որ ինքս էի հաւաքել, եւ բարկանում էի, թէ ինչո՞ւ խնայողութեամբ չէին գործ ածում, թէեւ մօրս խնայողութիւնը հասնում էր ժլատութեան:

Ձմեռոյայ մեր ապրուստը բաւական ապահովուած կը լինէր, եթէ մի մեծ դժուարութիւն դեռ մնացած չլինէր: Մայրս պէտք է վճարէր հարկերի վերջին վեցամսեակը: Թէեւ մենք այժմ ոչ տուն ունէինք եւ ոչ տեղ, ոչ հող ունէինք եւ ոչ ցանք, բայց հարկը դարձեալ պահանջում էին: Պահանջում էին գլխաւո-